ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094204-7Հ

ք. Երևան <<03>> 02. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն.Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր՝ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է կոնսերվատորիայի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.4.2.04 հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում <<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ում արտադրությունից կտրված ասպիրանտներին կրթաթոշակի հատկացման գործընթացը:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուղակցությունը կազմում է՝ 1 320 000 (մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք. Երևան, Սայաթ-Նովայի 1ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034163	Հ/Հ 900018002072
Նախարարության գլխավոր	ՀՎՀՀ 01504792
քարտուղար _____ Ն.Հարությունյան (ստորագրություն)	Ռեկտոր՝ _____ Ս.Հովհաննիսյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ